


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2016 թվականի հունվարին


(վերլուծություն)

2016 թվականի հունվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 9715 գործարք, որոնց քանակը 2015 թվականի դեկտեմբեր ամսվա համեմատ նվազել է 47.7 %-ով, իսկ 2015 թվականի հունվարի համեմատ՝ աճել 8.1 %-ով:

2016 թվականի հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2348 օտարման գործարքի 71.4 %-ը կազմել է առուվաճառքը, 27.4 %-ը՝ նվիրատվությունը և 1.2 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 32.0%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 34.1 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2016 թվականի հունվարին, 2015 թվականի դեկտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքները նվազել են 54.2 %-ով, իսկ 2015 թվականի հունվարի համեմատ՝ աճել 11.1 %-ով:

2016 թվականի հունվարին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 63.3 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2016 թվականի հունվարին, 2015 թվականի դեկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 58.3 %-ով, իսկ 2015 թվականի հունվարի համեմատ՝ աճել 6.1 %-ով:

2016 թվականի հունվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	հունվար 2015 թ.	հունվար 2016 թ.	դեկտեմբեր 2015 թ.
Կենտրոն	428000	428000	428000
Արաբկիր	356600	356800	356700
Քանաքեռ-Զեյթուն	282600	282900	282800
Նոր Նորք	252800	253700	253600
Ավան	260150	261350	261300
Էրեբունի	251100	252250	252200
Շենգավիթ	256750	257400	257350
Դավթաշեն	275100	276300	276300
Աջափնյակ	249500	250650	250550
Մալաթիա-Սեբաստիա	242400	243750	243600
Նուբարաշեն	156200	157050	157000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի հունվարին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2015 թվականի դեկտեմբերի համեմատ աճել են 0.04 %-ով:

2016 թվականի հունվարին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 192 բնակարան, որոնց քանակը 2015 թվականի դեկտեմբերի համեմատ նվազել է 50.0 %-ով, իսկ 2015 թվականի հունվարի համեմատ՝ աճել 17.1 %-ով:

2016 թվականի հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		հունվար 2015 թ.	հունվար 2016 թ.	դեկտեմբեր 2015 թ.
Արագածոտն	Աշտարակ	116000	116000	116000
	Ապարան	57500	58100	58100
	Թալին	65850	66500	66400
Արարատ	Արտաշատ	97100	98500	98200
	Մասիս	115800	115800	115800
	Վեդի	100700	101550	101550
	Արարատ	75500	77200	77100
Արմավիր	Վաղարշապատ	154100	154100	154100
	Արմավիր	121200	121200	121200
	Մեծամոր	87500	87550	87550
Գեղարքունիք	Սևան	99200	99400	99400
	Գավառ	59850	60350	60300
	Մարտունի	107700	107700	107700
	Վարդենիս	44800	45050	45050
	Ճամբարակ	28700	28750	28750
	Վանաձոր	88500	88500	88500
Լոռի	Ստեփանավան	74600	74650	74650
	Սպիտակ	99800	99850	99850
	Ալավերդի	55100	55400	55400
	Տաշիր	47300	47350	47350
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20300	20500	20500
	Աբովյան	155000	155100	155100
	Լոր Հաճն	128550	128550	128550
Կոտայք	Բյուրեղավան	108100	108200	108200
	Եղվարդ	109350	109550	109550
	Հրազդան	63800	63800	63800
	Ծաղկաձոր	292400	292400	292400
	Չարենցավան	85500	85500	85500
	Գյումրի	109200	109250	109250
	Արթիկ	66700	67000	66900
Շիրակ	Մարալիկ	40700	40900	40900
	Գորիս	122500	123400	123400
	Կապան	93150	94650	94500
Սյունիք	Սիսիան	91300	92000	92000
	Մեղրի	81000	82650	82650
	Ագարակ	46900	47500	47500
	Քաջարան	94600	94650	94650
	Դաստակերտ	8000	8000	8000
	Վայոց ձոր	94900	95000	95000
	Եղեգնաձոր	125500	125900	125850
Տավուշ	Ջերմուկ	112900	112950	112950
	Դիլիջան	113700	115200	115200
	Իջևան	118200	118450	118450
	Բերդ	60200	60300	60300
	Նոյեմբերյան	49850	50200	50200
	Այրում	31850	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով,

շուկայական միջին գները 2015 թվականի դեկտեմբերի համեմատ մնացել են անփոփոխ:

2016 թվականի հունվարին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 226 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 45 գործարք, մարզերում՝ 181 գործարք: 2016 թվականի հունվարին, 2015 թվականի դեկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 57.2 %-ով, ընդ որում, Երևանում՝ 77.8 %-ով, իսկ մարզերում՝ 44.3 %-ով: 2016 թվականի հունվարին 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 9.7 %-ով, ընդ որում, Երևանում՝ նվազել 18.2 %-ով, իսկ մարզերում՝ աճել 19.9 %-ով:

2016 թվականի հունվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	հունվար 2015 թ.	հունվար 2016 թ.	դեկտեմբեր 2015 թ.
Կենտրոն	476100	476100	476100
Արաբկիր	383000	383000	383000
Քանաքեռ-Զեյթուն	295000	295000	295000
Նորք-Մարաշ	319200	319200	319200
Ավան	270500	270500	270500
Էրեբունի	239750	239750	239750
Շենգավիթ	255000	255000	255000
Դավթաշեն	276000	276000	276000
Աջափնյակ	250050	250050	250050
Մալաթիա-Սեբաստիա	238000	238000	238000
Նուբարաշեն	150800	150800	150800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի հունվարին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2015 թվականի դեկտեմբերի համեմատ մնացել են անփոփոխ:

2016 թվականի հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		հունվար 2015 թ.	հունվար 2016 թ.	դեկտեմբեր 2015 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136200	136200
	Ապարան	60050	60050	60050
	Թալին	69250	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100000	100000
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153100	153100
	Արմավիր	107000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94800	94950	94950
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96100	96100	96100
	Վարդենիս	41000	41100	41100
	Ճամբարակ	31100	31100	31100
Լոռի	Վանաձոր	100000	100800	100800
	Ստեփանավան	90000	91100	91100
	Սպիտակ	114000	114000	114000
	Ալավերդի	50200	50200	50200
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	157000	157300	157300
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82600	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	83000	83000	83000
Շիրակ	Գյումրի	118500	119250	119250
	Արթիկ	63100	63350	63350
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130000	130000
	Կապան	100000	100650	100650
	Սիսիան	96500	96500	96500
	Մեղրի	84500	84600	84600
	Ագարակ	46900	46900	46900
	Դաստակերտ	11610	11610	11610
Վայոց ձոր	Վայք	90050	90150	90150
	Եղեգնաձոր	116600	116750	116750
	Ջերմուկ	131300	131300	131300
Տավուշ	Դիլիջան	113000	115400	115400
	Իջևան	123200	123200	123200
	Բերդ	60100	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը,

անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2015 թվականի դեկտեմբերի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2016 թվականի հունվարին հանրապետությունում օտարվել է 908 միավոր (346.36 հա) հող, որից Երևանում՝ 50 միավոր (5.07 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 526 միավոր (315.99 հա), որից Երևանում՝ 2 միավոր (0.11 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 286 միավոր (20.38 հա), որից Երևանում՝ 21 միավոր (0.83 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 77 միավոր (7.89 հա), որից Երևանում՝ 23 միավոր (3.82 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 9 միավոր (0.88 հա), որից Երևանում՝ 4 միավոր (0.31 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 6 միավոր (1.12 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 4 միավոր (0.10 հա) ընդհանուր մակերեսով:

2016 թվականի հունվարին հանրապետությունում օտարված հողերից 734 միավորի (286.94 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 40 միավոր (3.31 հա), նվիրատվության գործարք՝ 167 միավորի (58.79 հա), որից Երևանում՝ 9 միավոր (1.75 հա) և փոխանակության գործարք՝ 7 միավորի (0.63 հա), որից Երևանում՝ 1 միավոր (0.01 հա):

Հանրապետությունում 2016 թվականի հունվարին, 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակն աճել է 6.5 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 3.8 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 29.8 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 11.1 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Կոտայքի մարզում՝ 77.59 հա, որից 72.28 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 24.0 %-ը կամ 176 միավորը (79.89 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 12 միավոր (1.48 հա), իսկ 75.2 %-ը կամ 552 միավորը (207.04 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 28 միավոր (1.83 հա): 2016 թվականի հունվարին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 6 գործարք /0.02 հա/:

Ստորև ներկայացված է 2016 թվականի հունվարին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	3	0.20	3	0.02	6	1.26	2	0.11	1	0.11	14	0.64	11	0.97
Արագածոտն	10	7.00	1	0.18	0	0.00	4	0.24	24	19.99	0	0.00	12	1.14	0	0.00
Արարատ	10	6.98	0	0.00	11	0.66	6	0.23	52	26.72	0	0.00	21	1.89	1	0.02
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.01	61	32.31	0	0.00	29	2.86	2	0.18
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	3	0.28	8	0.29	13	14.94	1	0.12	14	1.62	1	0.90
Լոռի	0	0.00	0	0.00	4	0.15	4	0.09	64	21.33	0	0.00	1	0.13	4	0.26
Կոտայք	11	56.71	0	0.00	64	1.00	5	0.33	35	16.57	0	0.00	34	2.53	3	0.21
Շիրակ	2	1.49	0	0.00	0	0.00	2	0.02	35	27.39	0	0.00	8	0.62	1	0.20
Սյունիք	1	0.23	0	0.00	0	0.00	1	0.13	69	28.68	0	0.00	10	1.10	0	0.00
Վայոց ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	8	1.03	0	0.00	1	0.004	1	0.02
Տավուշ	1	1.00	0	0.00	6	0.33	3	0.02	10	1.95	2	0.07	4	0.34	0	0.00
Ընդամենը	35	73.41	4	0.38	91	2.44	40	2.62	373	191.02	4	0.30	148	12.87	24	2.76

Ստորև ներկայացված է 2016 թվականի հունվարին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	7	0.23	3	0.20	2	0.01	2	0.02	5	1.26	0	0.00	0	0.00	1	0.02	4	1.24
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	15	7.42	10	7.00	1	0.18	0	0.00	4	0.24
Արարատ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	26	2.94	9	2.05	0	0.00	11	0.66	6	0.23
Արմավիր	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Գեղարքունիք	1	0.14	0	0.00	1	0.14	0	0.00	10	0.43	0	0.00	0	0.00	2	0.14	8	0.29
Լոռի	3	0.07	0	0.00	1	0.06	2	0.01	5	0.17	0	0.00	0	0.00	3	0.09	2	0.08
Կոտայք	52	0.37	0	0.00	52	0.37	0	0.00	28	57.67	11	56.71	0	0.00	12	0.63	5	0.33
Շիրակ	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	1	0.01	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.01
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.36	1	0.23	0	0.00	0	0.00	1	0.13
Վայոց ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Տավուշ	2	0.09	0	0.00	2	0.09	0	0.00	8	1.26	1	1.00	0	0.00	4	0.24	3	0.02
Ընդամենը	67	0.92	3	0.20	58	0.67	6	0.05	100	71.52	32	66.99	1	0.18	33	1.78	34	2.57

2016 թվականի հունվարին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 3 գործարք (6.42 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2016 թվականի հունվարին, 2015 թվականի հունվարի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 5.1 %-ով: Ընդ որում, Երևանում աճել է 25.0 %-ով, իսկ մարզերում՝ 4.3 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 23.8 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ աճել է 32.0 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 47.8 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ նվազել 85.7 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2016 թվականի հունվարին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	7	3.12	74.3	602.1	166.9	15	5.08	365.0	12000.0	3645.0
Ապարան								86.5	2727.3	638.0
Թային	3	3.89	95.8	180.5	134.7	3	6.53	93.6	5494.5	800.0
Ծաղկահովիտ						4	8.04	79.5	1000.0	372.3
Արարատի մարզ										
Արտաշատ	5	1.33	68.4	1662.7	1154.2	25	12.92	335.1	10833.3	2701.4
Մալիս	3	0.43	91.6	399.1	216.8	3	0.82	200.0	11904.8	3187.1
Վեդի	1	0.29	499.4	499.4	499.4	24	12.98	207.0	10795.1	1957.5
Արմավիրի մարզ										
Արմավիր						36	20.50	294.3	9090.0	1303.0
Բաղրամյան						2	2.79	90.6	2561.1	923.7
Վաղարշապատ						23	9.02	444.4	11764.7	1963.4
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						6	2.51	199.8	1875.0	485.5
Ճամբարակ								60.5	953.3	352.0
Մարտունի						3	2.50	51.1	2850.0	800.0
Սևան								52.2	2134.8	352.2
Վարդենիս						4	9.94	41.2	2575.1	415.8
Լոռու մարզ										
Ալավերդի						3	1.16	170.4	6424.2	592.5
Գուգարք						2	1.52	234.6	6065.9	825.0
Սպիտակ								250.0	5555.5	675.0
Ստեփանավան						1	0.60	90.6	1686.6	413.5
Տաշիր						58	18.05	45.3	1384.4	185.0
Կոտայքի մարզ										
Արուլյան	7	40.25	269.0	887.9	512.3	17	3.34	279.3	11942.7	3936.8
Եղվարդ	3	16.18	118.8	610.2	345.3	17	12.82	174.4	11971.8	2483.1
Հրազդան	1	0.27	283.9	283.9	283.9	1	0.40	130.5	10256.4	1045.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						14	9.76	252.0	1693.1	643.1
Ամասիա								40.9	261.0	136.5
Անի						10	8.79	110.6	546.9	450.0
Աշոցք								58.5	215.8	138.5
Արթիկ						10	7.97	79.4	1428.6	518.0

Սյունիքի մարզ										
Գորիս						4	3.52	92.6	1023.2	787.5
Կապան						25	14.32	120.0	841.6	414.5
Մեղրի	1	0.23	232.4	232.4	232.4	29	7.59	193.0	3000.0	780.3
Սիսիան						11	3.26	46.3	1977.4	605.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						7	0.32	125.0	10000.0	1765.0
Վայք						1	0.71	58.8	1430.7	580.0
Տավուշի մարզ										
Բերդ						9	1.59	213.3	3783.8	675.0
Իջևան	1	1.00	2200.0	2200.0	2200.0	1	0.36	267.5	9454.5	1480.0
Նոյեմբերյան								46.7	7368.4	985.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2016 թվականի հունվարին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Մտավելագույն	Միջին			Նվազագույն	Մտավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						9	8496.0	130.7	22200.0	2591.2
Ապարան						2	1418.0	124.1	609.6	390.0
Թալին								63.2	1454.8	152.4
Ծաղկահովիտ						1	1490.0	60.0	214.3	93.5
Արարատի մարզ										
Արտաշատ	6	4069.1	538.8	3561.6	1200.0	5	5149.3	173.9	7140.3	907.0
Մասիս	1	23.8	3570.3	3570.3	3570.3	9	6663.4	187.5	25000.0	1209.7
Վեդի	4	2543.2	667.2	679.8	672.0	6	5902.5	126.1	5000.0	663.4
Արմավիրի մարզ										
Արմավիր						10	10258.0	131.6	9090.9	1215.5
Բաղրամյան						1	1100.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						17	14737.0	197.4	26528.4	1531.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						4	4870.0	186.6	1084.3	684.0
Ճամբարակ								71.3	2286.2	146.8
Մարտունի						7	8670.0	119.3	5000.0	279.7
Սևան	1	1322.2	413.0	413.0	413.0	1	1350.3	240.0	3110.4	335.0
Վարդենիս	1	31.5	600.0	600.0	600.0	2	1346.5	72.5	987.2	150.4
Լոռու մարզ										
Ալավերդի								114.3	1388.9	216.8
Գուգարք	2	78.0	3383.2	5843.3	4613.3			77.9	14083.3	1259.6
Սպիտակ						1	1250.0	104.9	1348.3	202.0
Ստեփանավան								88.2	1666.7	175.5
Տաշիր	1	777.7	400.0	400.0	400.0			45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	10	3253.7	524.0	5425.3	3494.5	16	10095.8	264.5	35353.5	1960.0
Եղվարդ	2	3083.1	204.2	204.2	204.2	16	13327.3	173.6	27000.0	2860.1
Հրազդան						2	1890.0	117.7	34848.5	1318.6

Շիրակի մարզ										
Ախուրյան						2	460.0	113.6	18750.0	335.4
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի						1	1170.0	67.9	180.6	203.0
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ						5	4570.0	111.8	5000.0	218.5
Սյունիքի մարզ										
Գորիս						1	1520.0	112.2	1700.0	365.1
Կապան								67.9	2638.9	352.5
Մեղրի						8	8503.0	68.5	632.9	268.2
Սիսիան						1	950.0	123.5	875.0	250.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						1	40.0	96.7	7659.6	508.5
Վայք								120.7	1448.3	250.0
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	125.3
Իջևան	4	2434.1	165.8	3000.0	1602.5	4	3425.0	74.1	14423.1	514.0
Նոյեմբերյան								125.0	1948.1	252.0

2016 թվականի հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 415 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.3 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 81.0 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2016 թվականի հունվարին, 2015 թվականի դեկտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 47.7 %-ով, իսկ 2015 թվականի հունվարի համեմատ՝ աճել 54.9 %-ով:

2016 թվականի հունվարին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 20 բնակարանի, 33 անհատական բնակելի տան, 182 հասարակական և 47 արտադրական նշանակության օբյեկտի, 121 հողի և 12 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2016 թվականի հունվարին Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 5 վարձակալության գործարքի քանակը 2015 թվականի դեկտեմբերի համեմատ նվազել է 50.0 %-ով, իսկ 2015 թվականի հունվարի համեմատ՝ աճել 2.5 անգամ:

2016 թվականի հունվարին հանրապետությունում վարձակալված 428.51 հա հողից 1.88 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 426.63 հա հողից 422.16 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 3.68 հա արդյունաբերական օբյեկտի, 0.05 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Վայոց ձորի մարզում՝ 293.52 հա գյուղատնտեսական նշանակության:

2016 թվականի հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 540 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 5.6 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2015 թվականի դեկտեմբերի համեմատ, նվազել է 77.3 %-ով, իսկ 2015 թվականի հունվարի համեմատ՝ աճել 32.4 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (51.9 %), անհատական բնակելի տների (20.9 %), հասարակական նշանակության օբյեկտների (12.2 %) և հողերի (6.9 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 299 գրավադրման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2015 թվականի դեկտեմբերի համեմատ նվազել է 74.6 %-ով, իսկ 2015 թվականի հունվարի համեմատ՝ աճել 19.6 %-ով:

2016 թվականի հունվարին հանրապետությունում գրավադրվել է 52.90 հա հող, որից 0.69 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողի 98.7 %-ը կամ 51.23 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հող գրավադրվել է Արագածոտնի մարզում՝ 20.0 հա գյուղատնտեսական նշանակության:

2016 թվականի հունվարին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 47 գործարք: 2016 թվականի հունվարին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2015 թվականի դեկտեմբերի համեմատ, նվազել է 71.0 %-ով, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել 95.8 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 26 գործարք, որը 2015 թվականի դեկտեմբերի համեմատ նվազել է 75.5 %-ով, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել 30.0 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2015 թվականի դեկտեմբերի համեմատ նվազել է 62.5 %-ով, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել 5.3 անգամ:

2016 թվականի հունվարին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 955 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2015 թվականի դեկտեմբերի համեմատ, նվազել է 57.4 %-ով, իսկ 2015 թվականի հունվարի համեմատ՝ աճել 26.7 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 9.8 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (20.6 %):

« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե